ՀԱՄԼԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Ինֆորմատիկայի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլհասցե՝ hamgalo@mail.ru

ԿԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ամփոփում

Սույն հոդվածի նպատակն է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով զարգացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների բանավոր խոսքը, մշակել այն գործիքակազմը, որը կօգնի այդպիսի համակազմ ունեցող սովորողների խոսքի զարգացմանը, բացահայտել էլեկտրոնային գործիքների կարևորությունը միջին դպրոցի ուսուցման գործընթացում:

Ուսումնասիրության ընթացքում եկել ենք այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաներն օժանդակում են ԿԱՊԿ ունեցող սովորողների խոսքի զարգացմանը, որի հիմքում էական դերակատարում ունի ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. ԿԱՊԿ ունեցող սովորողներ, խոսքի զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային ուսուցում, հաղորդակցական կարողություններ, գործիքակազմ:

Ներածություն

Վաղ շրջանում ԿԱՊԿ ունեցող սովորողները ինքնաբերաբար մասնակցում էին դասագործընթացին, յուրացնում ուսուցչի խոսքը, ձեռք բարձրացնելով՝ պատասխանում էին հարցերին կամ աշխատում որոշակի գրավոր հանձնարարականի վրա: Դա տեղի էր ունենում այն պատճառով, որ աշակերտները, պարզապես կրկնելով ուսուցչի ասածը, չէին ստեղծագործում և ինքնուրույն մտածում: Էլեկտրոնային գործիքների մեծ մասը անարդյունավետ էր կիրառվում և սակավ էր ծրագրակազմը կարգավորելու համար:

Վերջին ժամանակներում Հայաստանում անընդհատ վերանայվում և կատարելագործվում են կրթական ծրագրերը: Այսօր արդեն գրեթե բոլոր դպրոցները հագեցած են համակարգչային կաբինետներով, որոնք օգտագործվում են ինչպես ինֆորմատիկայի, այնպես էլ այլ առարկաների դասագործընթացում (մայրենի, մաթեմատիկա, օտար լեզու և այլն):

Գրատախտակները, որոնք տարիներ շարունակ օգտագործվում էին դպրոցներում, փոխարինվում են «խելացի» գրատախտակներով, գրքերը՝ էլեկտրոնային ընթերցանիչներով, թղթե տետրերը՝ էլեկտրոնային տետրերով: Բնագրի շուրջ կատարվող աշխատանքներին փոխարինելու են գալիս սահիկավազքերը:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք դիտման, դասալսումների, հարցախույզի, ստուգողական թեսթերի կիրառման մեթոդներ: Առաջադիր խնդրի լուծման համար կիրառել ենք տեսական հետազոտությունների և մանկավարժական փորձի վերլուծման և ընդհանրացման մեթոդներ:

***

Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվում են գործնական աշխատանքներ խոսքի զարգացման մեթոդիկայից: Առաջադիր խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել զարգացնող առարկայական միջավայր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:

Այս առումով կրթության պետական չափորոշիչը ներառում է՝

ա) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները,

բ) երեխաների՝ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը,

գ) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը,

դ) ուսումնական հաստատություններում ներառական միջավայրի չափանիշները,

ե) աշակերտների անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Կարողունակությունները միջին դպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Միջին դպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են տարբեր առարկաների դասերին ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Չափորոշչով սահմանված կարողունակությունները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա միջին դպրոցական տարքիքի երեխան: Ըստ էության, չափորոշչային վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Այդ տարիքի կրթության կարողունակություններից են՝ ա) լեզվական և հաղորդակցական, բ) ճանաչողական և մոտիվացիոն, գ) ինքնաճանաչողական և սոցիալական, դ) էլեկտրոնային մեդիա, ե) մշակութային[7] և այլն:

Չափորոշչային այս հստակ պահանջները պետք է կիրառել տարբեր առարկաների դասագործընթացում (մայրենի, մաթեմատիկա, ինֆորմատիկա և այլն): Հարկ է Մայրենիի դասին համակարգչով հնչեցնել բարեկիրթ խոսքի տարբեր նմուշներ: Աշակերտների տարիքային առանձնահատկություններին համապատասխան ապահովել խոսքի հնչյունային կուլտուրան, կազմակերպել հնչարտաբերական խաղեր ու վարժություններ: Պետք է օգնել, որպեսզի սովորողները տիրապետեն առարկաների և երևույթների անվանումներին, նրանց հատկանիշներին, երեխաներին ծանոթացնել առարկաների և երևույթների հականիշ և հոմանիշ բառերին, դրանց միջոցով կառուցել կապակցված խոսք:

Այսօր արդեն ինֆորմատիկայի դասագործընթացում կիրառվող գործիքները նախանշում են ուսուցման քայլաշարը, և իրականացվում է ուսուցման գործընթացը խոսքի զարգացման համատեքստում: Այս առումով էլեկտրոնային ուսուցման ճշգրիտ կազմակերպումը և մեթոդիկան կնպաստի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ինչպես բառամիավորների յուրացմանը, այնպես էլ խոսքակազմության կարողությանը:

Մեր օրերում էլեկտրոնային ուսուցումը կարող է օգնել՝ հեշտացնելու աշակերտների գիտելիքի յուրացմանը[8], ինչպես նաև խոսքի զարգացմանը: ԿԱՊԿ ունեցող սովորողները հաճախ կարող են զգալ, որ պայքարում են հաջողության հասնելու համար, այնպես որ սովորողների համար պետք է հնարավորություններ ստեղծել՝ ճանաչելու և բացահայտելու իրենց ձեռքբերումները:

Այսօր դպրոցում օգտագործվում են տարբեր տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ինտերնետ, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, ծրագրային ապահովում, վեբ գործիքներ և այլն: Երբ ասում ենք ինֆորմատիկա, զուգորդման օրենքի համաձայն սովորողների մոտ առաջինը մտքում համակարգիչն է ծնվում: Ինչպես մյուս նորամու-

---

[7] **Պետական կրթական չափորոշիչ,** Ե., 2021:

[8] **Гусева Е.Н.**, *Информатика*: учеб. пособие– М.: Флинта, 2011, с. 190.

ծությունները, այնպես էլ էլեկտրոնային ուսուցումը բերում է հարմարվողականության հետ կապ ունեցող խնդիրներ: Հիմնական առանցքը ուսուցիչ-սովորող կենտրոնացված կրթության ապահովումն է, դասի վրա հիմնված դեմ առ դեմ կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների ճիշտ օգտագործումը:

Անհրաժեշտ է երեխաներին ծանոթացնել հեքիաթների ընկալման մշակույթին (ձայնագրությունների ունկնդրում, լսած նյութի քննարկում): Խրախուսել սովորողների բառաստեղծումը (առաջարկել երեխաներին ստեղծել նոր բառեր, հյուսել հանելուկներ):

Չնայած կիրառվող գործիքներին՝ դեռ առկա են որոշակի դժվարություններ:

- ԿԱՊԿՈՒ սովորողների մոտ ընթերցանության և գրելու ավելի դանդաղ գործընթաց, քան մյուս սովորողների մոտ:
- Հիշողության անբավարարության պատճառով տեղեկույթի յուրացման և առաջադրանքի կատարման լրացուցիչ ժամանակի պահանջ:
- Դասագործընթացի քննարկումների ժամանակ մասնակցության ոչ լիարժեք և ոչ համաչափ ապահովում:

Եզրակացություններ

Մեր տեսական և գործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսուցիչները սովորողների հետ կարող են լինել էլեկտրոնային ուսուցման օգտագործողի դերում[9]: Մանկավարժական գործընթացի ժամանակ առկա դժվարությունները հաղթահարելու համար մենք օգտագործեցինք հետաքրքիր քայլաշար:

1. Թեստային աշխատանքների կատարում, մասնակցություն վիկտորինաներին:
2. Հեքիաթի ունկնդրում և քննարկում:
3. Հեքիաթային որևէ կենդանու պատկերում: Յուրաքանչյուր աշակերտ գրաֆիկական խմբագրիչի գործիքների միջոցով նկարում է կենդանու մարմնի որևէ մաս (3,53)[10]:

---

[9] **Потапова А. И.**, *Методика организации школьного урока информатики в рамках инклюзивного образования* // Современная педагогика. 2016. № 6 [Электронный ресурс]. URL: https://pedagogika.snauka.ru/2016/06/5763 (дата обращения: 05.10.2021), с. 21.

[10] **Գալստյան Ա. Վ., Ավագյան Լ. Մ.**, Մանկավարժական պրակտիկայի ընթացքում հեքիաթաթերապիայի կիրառումը որպես մայրենիի դասագործընթացի

Այս ամենը նպաստում է ոչ միայն խոսքի զարգացմանը, այլև միջանձնային հարաբերությունների ձևավորմանը: Արդյունքում դասը դառնում է առավել արդյունավետ, իսկ կյանքում աշակերտներին ազատ գործելու հնարավորություններ է տալիս:

Դասագործընթացի սկզբում տրվում են բլից հարցեր (ճեպահարցեր): Աշակերտներին ներկայացվում է աշխատելու քարտեզը: ԿԱՊԿ ունեցող սովորողները հնարավորություն են ունենում ինքնուրույն օգտվելու էլեկտրոնային վարժություններից, ապա գրաֆիկական խմբագրիչից: Գործընթացը կենտրոնացնում է աշակերտի ուշադրությունը, մոտիվացնում է նրան, մղում ավելի լավ ընկալելու իրավիճակը:

ԿԱՊԿ ունեցող սովորողները, օգտվելով նոր գործիքակազմից, հեշտությամբ են ինտեգրվում ուսումնական միջավայրին և ձեռք են բերում հաղորդակցական կարողություններ, զարգանում է նրանց բանավոր խոսքը:

Այս ամենը ԿԱՊԿ ունեցող սովորողներին մղում է՝

ա. շփվել ընկերների հետ՝ շարժումների (ժեստերի) և արտալեզվական միջոցների դրսևորմամբ,

բ. փոխանցել տեղեկույթ ընկերներին և ուսուցչին՝ զարգացնելով հաղորդակցական կարողունակությունները:

Օգտագործված գրականություն

1. Гусева Е.Н., *Информатика*: учеб. пособие – М.: Флинта, 2011.
2. Потапова А. И., *Методика организации школьного урока информатики в рамках инклюзивного образования* // Современная педагогика. 2016. № 6 [Электронный ресурс]. URL: https://pedagogika.snauka.ru/2016/06/5763 (дата обращения: 05.10.2021).
3. Գալստյան Ա. Վ., Ավագյան Լ. Մ., Մանկավարժական պրակտիկայի ընթացքում հեքիաթաթերապիայի կիրառումը որպես մայրենիի դասագործընթացի արդյունավետության բարձրացման միջոց, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 52-54:
4. Պետական կրթական չափորոշիչ, Ե., 2021:

արդյունավետության բարձրացման միջոց, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 53:

Гамлет Галстян

Развитие речи учащихся НОУО
посредством информационных технологий
Заключение

Ключевые слова и выражения: учащиеся НОУО, развитие речи, информационные технологии, электронное обучение, коммуникативные навыки, набор инструментов.

Целью данной статьи является развитие устной речи учащихся НОУО посредством информационных технологий, разработка средств, которые помогут развитию речи учащихся с такими признаками, раскрытие значения электронных средств в учебном процессе средней школы.

В ходе исследования мы пришли к выводу, что информационные технологии помогают развитию речи учащихся НОУО, в основе чего лежит значительная роль сотрудничества учитель-ученик.

Все это побуждает учащихся НОУО :

а. общаться с друзьями посредством движений «жестов» и экстралингвистических средств, развивать устную речь,

б. передавать информацию друзьям и учителю.

Gamlet Galstyan

The speech development of the NSEC lerners thpough
the information technologies
Conclusion

Key words and expressions: pupils NSEC, speech development, information technologies, electronic learning, communication skills, set of tools.

The purpose of this article is to develop the oral speech of pupils NSEC through information technologies, to elaborate tools that will help develop the speech of pupils with such characteristics, to reveal the importance of electronic means in the educational process of secondary school.

In the course of the study, we came to the conclusion that information technologies help to develop the speech of pupils NSEC, which is based on the significant role of teacher-student cooperation.

All this encourages pupils NSEC:

a. To communicate with friends through movements «gestures» and extra-linguistic means, to develop oral speech,

b. To share information with friends and teacher.

Խմբագրություն է ուղարկվել 18.03.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 01.04.2022թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.